ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» մայիսի 2020 թվականի N 01-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆԴԵՐՔԻ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԳՆԵԼ ՀԱՍՐԱԹՅԱՆԻ ԹԵԿՆԱԾՈՒԹՅԱՆԸ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդված 7-րդ մասի 6.2-րդ կետով, ՀՀ Կառավարության 2019 թվականի օգոստոսի 8-ի N 1000-Ն որոշման հավելված N 2-ի 19-րդ կետով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 733-Լ որոշման հավելվածի 17-րդ կետի 9-րդ ենթակետով՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի կառավարման խորհուրդը ***որոշում է***՝

1. Հավանություն տալ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի պաշտոնում նշանակելու համար Գնել Հասրաթյանի թեկնածությանը,

2. Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավար Վիգեն Ավետիսյանին՝ Հայաստանի Հանրապետության բնապահպանության և ընդերքի տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի նշանակման նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի հաստատմանը ներկայացնել Գնել Հասրաթյանի թեկնածությունը:

ՆԱԽԱԳԱՀ՝ Վ. ՋԻԼԱՎՅԱՆ